ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՕՐԲԵԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

պահպանելով պատմամշակութային ժառանգությունը և վերագնահատելով անցյալը

Գիտաժողովի հիմնադրույթների ժողովածու

ԵՐԵՎԱՆ 2025

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՕՐԲԵԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Գլաձորի համալսարան»
պատմամշակութային արգելոց-թանգարան
18 ապրիլի, 2025 թ.

ՀՏԴ 94(479.25)(082)
ԳՄԴ 63.3(5Հ)g43
Օ-843

Հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմակերպության ղեկավար՝ **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու **ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
Գեղարվեստական ձևավորող՝ **ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Օ-843 «ՕՐԲԵԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ» գիտաժողովի հիմնադրույթների ժողովածու, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն», Երևան, 2025, էջ 38:

Ժողովածուն ընդգրկում է ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից 2025 թ. ապրիլի 18-ին «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանում անցկացված «ՕՐԲԵԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ» խորագրով գիտաժողովում ներկայացված զեկուցումների հիմնադրույթները, որոնք վերաբերում են Օրբելյան իշխանության պատմությանը, Վայոց ձորի և հարակից գավառների միջնադարյան հուշարձաններին, դրանց հնագիտական պեղումներին, ճարտարապետությանը, վիմագրերին, խաչքարային մշակույթին, մատենագրությանը, իշխանական և հոգևորականների հանդերձանքին:

Ժողովածուն նախատեսված է մասնագետների, ԲՈՒՀ-երի հասարակագիտական ֆակուլտետների դասախոսների և ուսանողների, ինչպես նաև Հայաստանի միջնադարյան պատմության ու մշակույթի ամենատարբեր հիմնահարցերով հետաքրքրվող անձանց համար:

ՀՏԴ 94(479.25)(082)
ԳՄԴ 63.3(5Հ)g43

ISBN 978-9939-867-63-2

© «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 2025

«ՕՐԲԵԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ» ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գիտաժողովի կազմակերպչական կոմիտե

Կազմկոմիտեի նախագահ

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կազմկոմիտեի անդամներ

ՀԱՅԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՀԱՅԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ
ՆԱՐԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԱՐԳԱՄ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ԱՐԵՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ժողովածուի կազմին՝ Չեսար Օրբելյանի պալատի հարավային պատի կտրվածքը, Տարագրոս, 1934 թ., ԳԳ 449 Չ 81/61-2

ԱՌԱՋԱԲԱՆ

Օրբելյանները միջնադարյան Հայաստանի նշանավոր տոհմերից մեկն էին: Սկզբնական շրջանում իշխում էին Հայաստանի հյուսիսային և Վրաստանի հարավային շրջաններում: 12-րդ դ. 90-ական թթ. Օրբելյաններն ակտիվ մասնակցություն են ունենում հայ-վրացական միացյալ զորքերի հաջողությանը և որպես պարգև 1206 թ. կալվածքներ են ստանում սելջուկներից ազատագրված Վայոց ձոր - Սյունիքում: 1236 թ. մոնղոլների կողմից Հայաստանի գրավումից հետո Օրբելյանների իշխանությունն ավելի է ամրապնդվում: Շուրջ 200 տարի տևած Օրբելյանների իշխանության ժամանակաշրջանում Վայոց ձորը և շրջակա գավառները տնտեսական մեծ վերելք են ապրում, կառուցվում են աշխարհիկ և հոգևոր բազմաթիվ կառույցներ, վերելք է ապրում կրթությունը, գիտությունն ու մշակույթը:

«Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանում կազմակերպված գիտաժողովը նպատակ ունի արժեվորել Օրբելյան իշխանական տան ներդրումը Հայաստանի պատմության մեջ և խթանել նրանց թողած պատմամշակութային ժառանգության պահպանումը: Գիտաժողովում ներկայացվում են Օրբելյանների վերաբերյալ վերջին տարիների պատմահնագիտական ուսումնասիրությունների արդյունքները: Հատուկ ուշադրություն է հրավիրվում ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի արշավախմբի կողմից 2024 թ. ՀՀ Վայոց ձորի մարզի Հորս գյուղում գտնվող իշխանական պալատի պեղումներին, վերականգնման նախագծին և իշխան Չեսար Օրբելյանի գործունեության վերագնահատմանը: Անդրադարձ է կատարվում նաև իշխան Չեսարի Օրբելյանի կառուցած Վարդենյաց լեռնանցքի քարվանատանը, Օրբելյանների «մայրաքաղաք» Եղեգիսին, գլխավոր ամրոց Սմբատաբերդին, իշխանության հոգևոր կենտրոն Նորավանքին, Օրբելյանների հովանավորությամբ ծաղկում ապրած մյուս վանքերին, եկեղեցիներին և Գլաձորի համալսարանի պատմությանը:

ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ ԳՈԾԸՆԹԱՑՆԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզը հարուստ է տարաժամանակյա պատմամշակութային հուշարձաններով: Վերջիններս մշտապես հայ և արտասահմանցի պատմաբանների, հնագետների, արևելագետների, ազգագրագետների և ոլորտի այլ մասնագետների գիտագործնական ու գիտահետազոտական հետաքրքրությունների ծիրում են: Ըստ ժամանակագրական և պատմամշակութային բնորոշիչների, վերոնշյալ հուշարձանների առավել ներկայացուցչական և հետազոտված հատվածը նպատակահարմար է ներկայացնել հետևյալ հաջորդական խմբերով:

- Ք.ա. IV-I հազարամյակով թվագրվող պատմահնագիտական հուշարձաններ («Թռչունների քարանձավի» էնեոլիթյան կայանատեղի, Եղեգնաձորի «Ջոջ դար» բնակատեղի և դամբարանադաշտ, Մալիշկայից մոտ 4 կմ հարավարևելք տեղակայված «Մոզ» բնակավայրի բրոնզ-երկաթեդարյան շերտ և դրանից մոտ 3 կմ արևելք գտնվող դամբարանադաշտ, Գետափի ուրարտական ամրոց և այլն):
- Անտիկ դարաշրջանի պատմահնագիտական հուշարձաններ («Ջոջ դար» դամբարանադաշտի Ք.ա. II-Ք.հ. I դդ. թաղումներ, Արենիի անտիկ դամբարանադաշտ):
- Վաղմիջնադարյան հուշարձաններ («Մոզի» վաղմիջնադարյան բնատատեղի, Եղեգնաձորի «Քյոշք» հնագիտական համալիր, Շատինի վաղմիջնադարյան մատուռ և կառույցների մնացորդներ, Վարդանանց զինվորների նահատակության վայրեր և այլն):
- Զարգացած և ուշ միջնադարի պատմաճարտարապետական համալիրներ (Նորավանքի վանական համալիր, Արկազի Ս. Խաչ վանական համալիր, Շատիվանք, Գնդեվանք, «Ցաղաց

քար» վանական համալիր, Զորաց Ս. Սատվածածին եկեղեցի, Հերմոն վանական համալիր և մերձակայքում տեղակայված հրեական գերեզմանոց, Հոստունի հուշարձանախումբ, Չեսարի պալատ և քարավանատուն, Արենիի Ս. Աստվածածին եկեղեցի, Սմբատաբերդ և այլն):

Նշված հնավայրերն ու կառույցները շուրջ մեկ ու կես դար է, ինչ ուսումնասիրվում, նաև հնարավորությունների սահմաններում, մասնակի վերանորոգվում ու ամրակայվում են ինչպես բարերարների, այնպես էլ պետական միջոցներով: Այդ հայրենանվեր աշխատանքների ներկայացմանն ու մեկնաբանմանն էլ նվիրված է սույն հաղորդումը:

**ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԼԵՎՈՆ ՎԱՍԻԼՅԱՆ,
ՀԱՅԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ,
ՏԻԳՐԱՆ ՋԱՔՅԱՆ, ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,
ԱՍՏՂԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ,
ԱՍՏՂԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ**

*Պատմամշակութային արգելոց-թանգարանների և
պատմական միջավայրի պահպանության ծառայություն
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

ՉԵՍԱՐ ՕՐԲԵԼՅԱՆԸ ԵՎ «ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի 2024 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀՈՐՍ ԳՅՈՒՂՈՒՄ

Չեսար իշխանը միջնադարյան Հայաստանի Օրբելյան նշանավոր տոհմից էր, որոնք նախապես իշխում էին Հայաստանի հյուսիսային և Վրաստանի հարավային շրջաններում: 12-րդ դ. 90-ական թթ. Օրբելյաններն ակտիվ մասնակցություն են ունենում հայ-վրացական միացյալ զորքերի հաջողությանը և որպես պարգև 1206 թ. կալվածքներ են ստանում սելջուկներից ազատագրված Վայոց ձոր-Սյունիքում:

1236 թ. մոնղոլները գրավում են Հայաստանը: Մոնղոլական պետության կազմում հայտնվելուց հետո Օրբելյանների ջանքերով Սյունիքը հռչակվում է «ինջու»՝ դառնալով արտոնյալ կալվածք, որն ազատ էր մոնղոլ պաշտոնյաների և հարկահավաքների ապօրինություններից և համարվում էր մեծ խանական ընտանիքի տնօրինության տակ գտնվող տիրույթ: Այդ իրավունքը ձեռք է բերվում և վերահաստատվում 1251 և 1256 թթ. Օրբելյան իշխանատոհմի գլուխ կանգնած Սմբատ Օրբելյանի (Չեսարի պապի ավագ եղբայր)՝ մեծ խան Մանգուի մոտ Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակում մեկնելու շնորհիվ:

Չեսարն իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելյանի և Անա իշխանուհու կրտսեր որդին էր (ծննդյան թվականն անհայտ է, մոտ 13-րդ դ. երկրորդ կես): «Պարոն» Չեսար Օրբելյանը Լիպարիտյան ճյուղի գահերեց իշխանն էր, նրա կառավարման ժամանակաշրջանը՝ 14-րդ դ. առաջին կեսը, համընկավ աշխար-

հաքաղաքական բարդ իրավիճակի հետ: Իլխանության ներսում ծայր առան գահակալական կռիվներ, տեղի ունեցան պալատական հեղաշրջուներ և բազմաթիվ պատերազմներ, 1284-1344 թթ. իլ-խանության գահին բազմեցին իրար հաջորդած տասնմեկ իլխան-ներ: Միաժամանակ այդ տարիներն Օրբելյան իշխանատոհմի վերելքի գագաթնակետի ժամանակարշջանն էին:

Վայոց ձորի Հորս գյուղում են գտնվում 13-14-րդ դդ. Հայաս-տանի քաղաքացիական ճարտարապետության պահպանված լա-վագույն նմուշներից մեկը համարվող պալատական համալիրի և կից եկեղեցու ավերակները, «մեծ իշխան» Չեսար Օրբելյանին և նրա կնոջը՝ Խորիշահին հիշատակող արձանագրություններ:

2024 թ. ՀՀ ԿԳՄՍՆ պատվերով և ֆինանսավորմամբ «Պատ-մամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջա-վայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի արշավախումբը պեղումներ կատարեց Հորսում, որի արդյունքում պատրաստվեց միջնադարյան պալատական համալիրի կենտրոնական կառույցի և կից եկեղեցում վերականգնման նախագիծը:

**ԲՈՐԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ,
ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ, ՀԱՅԿ ՀԱՅԴՈՍՅԱՆ,
ԱՆԻ ԱԴԻԳՅՈԶԱԼՅԱՆ, ԴՄԻՏՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ,
ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, ՍՄԲԱՏ ԴԱՎԹՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ԳՆԻՇԻԿ ԳԵՏԻ ԿԻՐՃԻ՝ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԲԵՐՈՂ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Օրբելյան իշխանական տան տիրապետության ժամանակաշրջանը Վայոց ձորում ներկայացված է բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններով, որի զարդն է հանդիսանում Նորավանքի վանական համալիրը: Այսուհանդերձ, վերջին տարիներին՝ Արփայի վտակ Գնիշիկ գետի կիրճում իրականացված դաշտային-հետազոտական աշխատանքների և պեղումների արդյունքում փաստագրվել են մի շարք հնագիտական սկզբաղբյուրներ, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել պատմական այս կարևոր փուլի տնտեսության, կենցաղի, վարչական կառավարման, առևտրական կապերի և այլնի հետ անոնչվող մի շարք հարցեր: Նշված սկզբնաղբյուրների շարքում են Արենի-1 և Արենի-2, Մագելանի քարայրները, Գնիշիկաձորի հնագիտական համալիրը և այլն: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Գնիշիկաձորի երկայնքով տարածվող այգեգործական լանդշաֆը, որը ներկայանում է խաղողի այգիների մնացորդներով և դրանք սնուցող առու-ջրանցքներով, ինչպես նաև գյուղատնտեսության կառավարման համար կառուցված վարչական շինությամբ, որպիսին Գնիշիկաձորի հնագիտական համալիրն է:

Գիտաճանաչողության առումով անակնկալ է քարայրների սահմաններում պահպանված՝ խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական հարուստ մնացորդներ պարունակող շերտերի առկայությունը, որոնց հուսալի հասակագրումն իրականացվել է բազմաթիվ ռադիոածխածնային վերլու-

ծությունների շնորհիվ: Բացի նյութական մշակույթի մնացորդնե-ը (խեցեղեն, մետաղե իրեր, ապակի), քարայրների զարգացած միջնադարյան շերտերում փաստագրվել են բազմաթիվ բույսերի սերմերի, կենդանիների ոսկրային մնացորդների, փայտե առարկաների, գործվածքների, ձեռագրերի պատառիկների՝ բավականին լավ պահպանված նմուշներներ, որոնք, համադրվելով շրջակա կենսապահովման ռեուրսների հետ, թույլ են տալիս իրականացնել գյուղատնտեսության, արհեստների, որսորդության և այլնի մասին ուշագրավ դիտարկումներ:

Վերը նշված հնագիտական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից երևում է, որ Օրբելյան իշխանական տունը հոգ է տարել Վայոց ձորի տնտեսության կազմակերպման մասին և լավագույնս կառավարել այն:

ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՐԱՐԱՏ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԸՍՏ ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Սպիտակ վանքը գտնվում է Արարատի մարզի Լանջանիստ գյուղից 2 կմ հյուսիս՝ լեռան ընդարձակ դարավանդին: 2024 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներ է իրականացրել վանքի տարածքում: Հետազոտությունների արդյունքում լրացվում է 13-14-րդ դդ. Այրարատ նահանգի Ուրծ և Արծ գավառների վանքերի ցուցակը, որոնցից նշանավորը հոգևոր և կրթամշակութային կենտրոն հանդիսացող Ս. Հովհաննես Կարապետի վանքն է: Վերջինիս կառուցումը հովանավորվել է Սյունյաց նշանավոր տեր Տարսայիճ Օրբելյանի որդու՝ Ջալալի և նրա կնոջ՝ Գոնցայի կողմից:

Սպիտակ վանքի պատերին պահպանված արձանագրություններում Օրբելյանների հիշատակությունը կասկած չի թողնում, որ այստեղ ևս իշխանական տան Ջալալյան ճյուղը ծավալել է ակտիվ շինարարական գործունեություն:

Մինչ պեղումները վանական համակառույցից հայտնի էր միայն Ս. Աստվածածին եկեղեցին (14-րդ դ. սկիզբ): Պեղումների արդյունքում հայտնաբերվել է գավիթը, հարակից տապանաբակը, օժանդակ շինությունները:

Պեղումների ուշագրավ արդյունքներից է նաև նորահայտ եկեղեցին, որը բացվել է Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային կողմում: Նորահայտ եկեղեցու պատերը պահպանվել են գրեթե 1.5 մ բարձրությամբ, խորանին իր տեղում հայտնաբերվել է Սուրբ սեղանը, իսկ հյուսիսային պատին՝ մկրտության ավազանը: Եկեղեցու մուտքի երկու կողմերում առկա են արձանագրություններ, որոնց վերծանությունը բազմաթիվ հարցերի պատասխան կարող է տալ: Նորահայտ եկեղեցու արևմտյան կողմում բացվել է գավիթը: Պեղումների արդյունքում հայտնաբերվել են նաև բազմաթիվ տապանաքարեր, որոնցից որոշները կրում եմ մարդու սխեմատիկ

պատկերներ, ինչը բնորոշ է 13-14-րդ դդ.: Բացվել են նաև վեցաթև աստղի և վարդյակի պատկերները կրող տապանաքարեր, որոնք կարծում ենք, պատկանում են սոցիալական բարձր դիրք ունեցող անհատների:

Պեղումների ուշագրավ արդյունքներից է նաև Ս. Աստվածածին եկեղեցու հարավարևելյան մասում հայտնաբերված դամբարանային կառույցը, որտեղ ամփոփված են վանքի կառուցման գործում կարևոր դեր ունեցած ընտանիքի անդամները:

Այսպիսով, Սպիտակ վանքի պեղումների արդյունքներով ևս մեկ անգամ փաստվում է Օրբելյան իշխանական տան Ջալալյան ճյուղի կարևոր դերը Այրարատ նահանգում հոգևոր կառույցների շինարարության գործում:

ՄԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ
Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔԻՑ ՏԱՓԻ ԲԵՐԴ. ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Օրբելյանների իշխանական տունը, որ Սյունյաց աշխարհում հաստատվեց 13-րդ դ. առաջին կեսին, հանդիսանում է միջնադարյան Հայաստանի ամենաազդեցիկ տոհմերից մեկը: Երկրի ներքաղաքական կյանքում գրաված կարևոր դիրքի ու վարած արտաքին ճկուն քաղաքականության շնորհիվ նրանք կարողացան նպաստավոր պայմաններ ապահովել տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման համար: 13-րդ դ. Սմբատ Օրբելյանն իր տիրապետության տակ է միավորում բազմաթիվ գավառներ՝ Եղեգիքը, Վայոց ձորը, Ուրծը և այլն, բազմաթիվ գյուղեր ու ավաններ Կոտայքում, Գեղարքունիքում և այլուր: Օրբելյանների՝ հատկապես Տարսայիճի և նրա թոռ Բուրթելի օրոք Սյունիքն ապրել է տնտեսական վերելք, աշխուժացել է մշակութային կյանքը: Կառուցվել են բազմաթիվ հոգևոր կենտրոններ, որտեղ գործել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, ստեղծվել մեծարժեք ձեռագրեր:

Միջնադարյան Հայաստանի բարձրագույն ուսումնական և գիտական այդ կենտրոններից էր Վայոց ձորում գտնվող Աներմոնի կամ Հերմոնի վանքը: Այն հիմնադրվել է 936 թ. Սյունյաց գահերեց իշխան Սմբատի և Հակոբ եպիսկոպոսի կողմից: Հայտնի գրչօջախն իր մշակութային ծաղկմանն է հասել 14-15-րդ դդ., երբ գտնվել է Օրբելյանների նախարարական տան հովանավորության ներքո:

Այրարատ աշխարհում նրանց մշակութային և շինարարական գործունեությունը ակնառու է ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի տարածքում՝ պատմական Ուրծ (Ուրծաձոր) գավառում: Գավառն իր բազմադարյան պատմության ընթացքում ունեցել է ծաղկման և բարգավաճման երկու փուլ՝ 4-7-րդ դդ. և 12-15-րդ դդ.:

Տափի բերդը կամ «Գևորգ Մարզպետունի» ամրոցը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Ուրցաձոր գյուղից 6 կմ

հյուսիս-արևմուտք, ձորահովտին իշխող բլրի վրա: Հանդիսացել է միջնադարյան Ուրծաձոր գավառի կենտրոն Ուրծ գյուղաքաղաքի արևմտյան ծայրամասը: Ամրոցի գրեթե կենտրոնում տեղակայված է դեղնա-սպիտակավուն սրբատաշ կրաքարով շարված միանավ բազիլիկ եկեղեցի-մատուռը: Տափի բերդի (Տափի վանք) թվակիր (13-րդ դ.) արձանագրություններում հիշատակվում են հայտնի Օրբելյաններ «պարոն Տարսայիճն» ու հավանաբար նրա ծոռ Հովհաննես Օրբելը: Հայտնի է, որ Տարսայիճի որդի Ջալալի սերունդները երկար ժամանակ շարունակել են իշխել Ուրծաձորում:

Հիշյալ հուշարձանների մասնակի ուսումնասիրությունները լի են ուշագրավ նորահայտումներով: Դրանց հետագա և համակողմանի հետազոտությունները մեզ թույլ կտան լրացնել հայ անվանի նախարարական տան քաղաքական և հոգևոր գործունեության վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները և վերաարժևորել նրանց թողած պատմամշակութային ժառանգության կարևորությունը՝ սերունդներին փոխանցելու, նրանց ազգային գիտակցությունը բարձրացնելու և իրական հայրենասիրական ոգով կրթելու նպատակով:

ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՕՐԲԵԼՅԱՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔԸ

Եղեգիսը 9-րդ դ. առաջին տասնամյակներից սկսած մինչև 17-րդ դ. կեսերը հանդիսանալով Վայոց ձորի քաղաքական կենտրոնը, կարևոր դեր է խաղացել Սյունյաց աշխարհի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում:

Օրբելյան իշխանների տիրապետության տարիներին Եղեգիսը հասնում է իր ծաղկման գագաթնակետին: Այդ են վկայում այս շրջանի գրչագիր ձեռագրերը: Այսպես, 1297 թ. Հովհան գրչի կողմից ընդօրինակված Ավետարանում կարդում ենք. «Բայց գրեցաւ աստուածային մատեանս ի գաւառիս Սիսական, ի գերահռչակ մայրաքաղաքիս Եղեգեաց»: Այս շրջանում Եղեգիսն այնքան նշանավոր էր, որ Վայոց ձոր գավառը գրչագիր ձեռագրերում հիշատակվում է «Ի գաւառս Եղեգիս», «ի երկիրն որ կոչի Եղեգիս» անվանումներով:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը 2006-2010 թթ. պեղումներ է իրականացրել Եղեգիս հնավայրում՝ գյուղի արևելյան ծայրին գտնվող միջնադարյան հայ ճարտարապետության յուրօրինակ հուշարձաններից մեկը համարվող Զորաց տաճարի տարածքումը: Այն կառուցել է Սյունյաց նահանգի մետրոպոլիտ Ստեփանոս-Տարսայիճը: Այս չափազանց հետաքրքիր կառույցը ներկայացնում է երկու սյուներով երեք մասի բաժանված, արևելյան խորանով, նրան երկու կողմերին կից ավանդատներով բաց եկեղեցի: Հուշարձանի հազվագյուտ ձևը նախորդ ուսումնասիրողներին ենթադրել է տվել, որ այն նախատեսված է եղել զորքի աղոթքների համար, որը կանգնում էր եկեղեցու դիմաց՝ բաց գավթում: Այստեղից էլ նրան տրված «Զորաց տաճար» անվանումը: Եկեղեցին կրող բարձունքի շուրջը պահպանվել են բազալտի զանգվածեղ քարերով կառուցված պարիսպը և սրբատաշ քարով դարպասը: Շուրջը գերեզմանատուն է՝ մի քանի տասնյակ խաչքարերով ու տապանաքարերով: Հայտնաբերված ողջ հնագիտական նյութը հիմնականում թվագրվում է 14-16-րդ դդ.:

ԱՐԱ ՋԱՐՅԱՆ
Անկախ հետազոտող

ՎԱՅՈՑ ՁՈՐ ԳԱՎԱՌԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Վայոց ձորը հյուսիսից սահմանակից էր Սյունիքի Գեղարքունիք և Սոդք գավառներին, արևելքից՝ Սյունիքի Ծղուկք (Այլախ) և Արցախի Վայկունիք, հարավից՝ Սյունիքի Ճահուկ (Շահապոնք), Նախիջևան և Այրարատի Շարուր գավառներին, իսկ արևմուտքից՝ Այրարատի Արած և Ուրցաձոր գավառներին: Ներկայում այն համապատասխանում է ՀՀ Վայոց ձոր մարզի և Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հյուսիսային մի փոքր հատվածին: Վայոց ձոր գավառի վարչական կենտրոնը 735 թ. եղել է Մոզը: 9-րդ դ. սկսած գավառի կենտրոնը Եղեգիսն էր, որ նախ Սյունյաց գահերեց իշխանների աթոռանիստ կենտրոններից էր, իսկ 13-րդ դ. սկզբին Զաքարյանների գլխավորությամբ Վայոց ձորի ազատագրումից և Օրբելյանների իշխանության հաստատումից հետո դառնում է նրանց նստոցը, իսկ գլխավոր ամրոցը՝ Սմբատաբերդը:

Նույն ժամանակամիջոցին գավառի մի մասի իշխանությունը տրվում է Պռոշյաններին, որոնք իրենց աթոռանիստն են դարձնում Սրկղունք ավանը, գլխավոր հենակետը՝ Բոլորաբերդը (Պռոշաբերդ), իսկ հոգևոր կենտրոնը՝ Թանահատ-Գլաձորի վանքը:

Ռազմապաշտպանական ճարտարապետության իմաստով ամբողջ գավառի տարածքում կարևոր են եղել հետևյալ պաշտպանական համակարգերը, առանձին ամրոցներն ու վանք-ամրոցները.

- Դվին-Պարտավ ճանապարհի Վայոց ձորով անցնող Վարդենյաց լեռնանցք - Սիսական ճանապարհահատվածի ռազմավարական համակարգը,
- Պռոշյան տոհմի իշխանական տիրույթի պաշտպանական համակարգը,
- Բոլորաբերդ - Սպիտակավոր, Սմբատաբերդ - Ցաղաց քար, Հրասեկա - Ամաղու Նորավանք երկկենտրոն պաշտպանական համակարգերը,

• Սրկղունք և Արփա մայրաքաղաքների պաշտպանական համակարգերը:

Վայոց ձորի նշանավոր ամրոցներն էին Արբա կամ Ուլյա Նորաշենը, Արփան (Արենի), Էրդիչը, Նորաշեն կամ Վարդանի բերդը, Ապանան, Սուլեման, Բոլորաբերդը, Եղեգիք կամ Սմբատաբերդը: Վանք-ամրոցներից նշանավոր էր Շատինը, քարավանատներից՝ Օրբելյաններինը:

Զեկուցման մեջ մեկտեղվում են պատմական Սյունյաց աշխարհի Վայոց ձոր գավառի իշխանական տիրույթների պաշտպանական համակարգը, ռազմական նշանակության ճանապարհի պաշտպանական համակարգը և առանձին բերդերի ճարտարապետական ու շինարարական առանձնահատկությունները:

Վայոց ձոր գավառը ռազմավարական առումով կարևոր էր առևտրական ճանապարհների, լեռնանցքների, իշխանական տիրույթների, վարչական կենտրոնների, հոգևոր-մշակութային հաստատությունների, անապատների ու քարավանատների ներկայությամբ: Բոլոր այս ռազմավարական խոշոր միավորներն ունեցել են հուսալի պաշտպանական տարրեր ու համակարգեր, որոնց ընդարձակ ու լայնատարած ցանցն ապահով է դարձրել գավառը:

ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ
Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան

ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՊՌՈՇՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Հայ իշխանական տների շարքում 13-14-րդ դդ. առաջնակարգ դիրք էին զբաղեցնում Վայոց ձորի երկու նշանավոր իշխանատոհմերը՝ Օրբելյանները և Պռոշյանները, որոնք երբեմն համագործակցության, երբեմն էլ մրցակցության մեջ էին ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանության համար մղվող պայքարում: Նրանց համատեղ իշխանավարման ժամանակաշրջանում, չնայած աշխարհաքաղաքական բարդ և փոփոխվող պայմաններին (սելջուկների դեմ մղվող պայքար, վրացական թագավորության տիրապետություն, մոնղոլ-թաթարական արշավանքներ, իլխանական տիրապետություն և այլն), Վայոց ձորում վերելք էր ապրում մշակութային կյանքը և շինարարությունը: Օրբելյանների և Պռոշյանների հովանավորությամբ ոչ միայն հիմնվում էին բարձրագույն դպրոցներ, վանքեր ու եկեղեցիներ, այլ նաև աշխարհիկ մոնումենտալ կառույցներ՝ ամրոցներ, քարավանատներ և իշխանական ապարանքներ:

Վայոց ձորում հայտնի են Օրբելյան գահերեց իշխանների նստոց Եղեգիս գյուղաքաղաքում գտնվող իշխանական երկու ապարանքներ՝ 13-րդ դ. կեսերով թվագրվող Սմբատ Օրբելյանի ապարանքը և ըստ շքամուտքի ճակատակալ քարի շինարարական արձանագրության 1274 թ. կառուցված Տարսայիճ Օրբելյանի ապարանքը (երկու ապարանքների հստակ տեղը հայտնի չէ): Արփա (այժմ՝ Արենի) գյուղում է գտնվել 13-րդ դ. վերջով թվագրվող Օրբելյանների ձմեռանոց-ապարանքը (հստակ տեղն անհայտ է), իսկ Հորս գյուղում՝ իշխան Չեսարի Օրբելյանի 14-րդ դ. սկզբով թվագրվող ապարանքը, որի ավերակները կանգուն են մինչ օրս:

Վայոց ձորում հայտնի է նաև Պռոշյան իշխանների 13-րդ դ. սկզբով թվագրվող ապարանքը Սրկղունք (այժմ՝ Վերնաշեն) գյուղում (ապարանքի հստակ տեղն անհայտ է):

ՍՄԲԱՏ ԴԱՎԹՅԱՆ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՔԱՐԱՅՐ-ՃԳՆԱՐԱՆՆԵՐԸ

Միջնադարյան հայ պատմագրության մեջ պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ ճգնավորների և անապատականների մասին: Սկսած 5-րդ դ. հայ պատմիչներն անդրադարձել են այս երևույթին՝ բերելով տասնյակ փաստեր: Ճգնավորությունը և անապատականությունն ուսումնասիրության առարկա է դարձել նաև 20-րդ դ., սակայն փաստագրական հիմքի վրա կատարված որևէ վերլուծություն չկա այս շարժման վերաբերյալ: Մինչդեռ պահպանված բազմաթիվ հուշարձաններ վկայում են ճգնավորության և անապատականության լայն տարածվածության մասին: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում քարայրները՝ քարանձավները և ստորգետնյա խոռոչները:

Քարայր-ճգնարանները ծիսական համալիրներ են, կազմված երկու մասերից՝ աղոթատեղիից և անապատական-ճգնավորի կեցավայրից: Աղոթատեղի էին ծառայում խորան ունեցող ժայռափոր և վերգետնյա մատուռները կամ աղոթատեղիի վերածած բնական անձավները, իսկ կեցավայր՝ ինչպես բնական անձավները, այնպես էլ ճյուղերից հյուսված կամ կավածեփ խրճիթները: Քարայր-ճգնարան համարվելու համար դրա բաղկացուցիչներից որևէ մեկը՝ կեցավայրը կամ աղոթավայրը, կամ երկուսն էլ պետք է լինեին քարայր (բնական կամ ժայռափոր):

Պատմական աղբյուրների ուսումնասիրությունները և ժամանակակից անձավագիտական հետազոտությունները բացահայտել են մի քանի բնական և արհեստական ծագում ունեցող քարայրներ և քարայրային համալիրներ, որոնք ծառայել են որպես ճգնարաններ: Բնական քարայրները (ժայռածածկեր, ծերպեր, քարանձավներ և այլն) ձևավորվել են կարստային, էրոզիոն և սուֆոզիոն պրոցեսների արդյունքում: Արհեստական անձավները փորվել են հիմնականում հրաբխածին և նստվածքային ապարներում և տեղերում հայտնի են «Ճգնավոր» անվանումով: Միջնադարում ճգնավոր-

ներն իրենց ժամանակի կիրթ մարդկանցից են եղել և հետագայում վանական համակարգի զարգացմանը զուգահեռ՝ տեղափոխվել են վանական ծառայության, լքելով իրենց ճգնարանները:

Վայոց ձորի բոլոր հիմնական վանական համալիրների տարածքներում կամ շրջակայքում (Գնդեվանք, Նորավանք, Խոտակերաց վանք, Հերհերի Ս. Սիոն վանք, Հերմոնի վանք) եղել են քարայրներ, որտեղ ճգնել են այդ վանքերի հիմնադիրները կամ շարքային անդամները:

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՋԱԼԱԼՅԱՆ ՃՅՈՒՂԻ ՎԱՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օրբելյան-Ջալալյան տոհմը կարևոր դիրք ուներ 13-14-րդ դդ. Վրաստանի ներքաղաքական կյանքում, ինչը նաև արտացոլվել է վրացական պետության հայաբնակ տարածքների մշակույթում: Այդ դարերում Վրաստանը, որի կազմում էր նաև Արևելյան Հայաստանը, գտնվում էր տարբեր քաղաքական մարտահրավերների առջև, ինչը սակայն չխանգարեց, որ վերոնշյալ ժամանակահատվածը նշանավորվի քաղաքական, տնտեսական, գիտական ու հոգևոր կյանքի ծաղկմամբ, հատկապես մենաստանների և վանական համալիրների կառուցման միջոցով:

Օրբելյան-Ջալալյան տոհմը, որի ներկայացուցիչները նշյալ դարերում բարձր դիրք էին զբաղեցնում վրացական արքունիքում ու տիրում էին Արարատյան դաշտի մի զգալի հատվածին, մեծապես նպաստեցին վանական շինարարության զարգացմանը: Նրանք կառուցել են մի շարք վանական համալիրներ ներկայիս ՀՀ Արարատի մարզում, որոնց տպված ու անտիպ արձանագրությունների, այդ վանքերից մեզ հասած ձեռագրերի բովանդակության ու հիշատակարանների միջգիտակարգային քննությունը պատմական համատեքստում կլինի այս զեկույցի գլխավոր նպատակը:

ՍԵՎԱԿ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

ՄՈՄԻԿԻ ԽԱՉՔԱՐԱՐՎԵՍՏԻ ՈՃԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Բազմաշնորհ և տաղանդավոր վարպետ Մոմիկն իր ուրույն և պատվավոր տեղն է զբաղեցնում միջնադարյան հայ արվեստի պատմության մեջ: Նրա տաղանդը հավասարապես փայլատակել է թե՛ մանրանկարչության, թե՛ ճարտարապետության, թե՛ քանդակագործության և խաչքարագործության բնագավառներում:

Խաչքարարվեստում Մոմիկն այն եզակի քարգործն էր, որը կարողացավ հասնել Պողոսի արվեստի մակարդակին: Եվ երկու վարպետները սահմանեցին մի սանդղակ, որն այլևս անհասանելի դարձավ հետագա վարպետների համար:

Ուսումնասիրությունները, համեմատական քննությունը, թույլ են տալիս ենթադրել, որ Մոմիկը խաչքարերի ոճերի ձևակերպման ժամանակ մեծապես օգտվել է Վայոց ձորի 13-րդ դ. երկորդ կեսի վարպետների, մասնավորապես Մխիթարի և Շնորհավորի, և նույն դարի վերջին գործած մեծահռչակ Պողոսի կերտած խաչքարերից:

Վայոցձորյան խաչքարերի հետ ընդանուր են արձանագրության տեղադրությունը խաչքարի ներքնամասում, սլացիկ, երկարավուն խաչատեղ-խորանը: Իսկ ահա խաչքարերի բազմաշերտ մակերեսը, զարդագոտիների, քիվերի մշակումը մերձ են Պողոսի կերտած խաչքարերին:

Ներդաշնակ համատեղելով խաչքարային այս ոճերը, նաև զուգակցելով մանրանկարչության բնագավառում ձեռք բերած փորձը և գիտելիքները, Մոմիկը ստացել է կատարյալ խաչքարային հորինվածք:

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ԱՐԱԲԱՏԱՌ ԱՐՁՆԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ «ԻՆՋՈՒ» ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Պատմական Հայաստանի Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառի միջնադարյան որոշ հուշարձանները (Օրբելյանների քարվանատունը, Եղեգիսի Ս. Նշան եկեղեցին, Ագարակաձորի կամուրջը, Եղեգնաձորի թանգարանում պահվող քարաբեկորը և այլն) ունեն արաբատառ արձանագրություններ: Սրանցից կարևարագույնն իշխան Չեսար Օրբելյանի կառուցած քարավանատան հանրահայտ արձնագրությունն է (1332 թ.): Քարավանատան հայերեն արձանագրությունը փորագրված է նախասրահում, մինչդեռ արաբատառը, որ փորագրված է մուտքի բարավորին արտաքուստ ու դեռևս նախորդ դարում ընթեռնելի էր, այժմ ամբողջովին եղծված է:

Հետաքրքրական է նաև Եղեգիսի Ս. Նշան եկեղեցու մոտ տարածվող միջնադարյան գերեզմանոցի հարավային մասում գտնվող սալաքարի արաբերեն արձանագրությունը, որը մաս է կազմում եռալեզու արձանագրության (հայերեն, պարսկերեն և արաբերեն):

Ձեկուցման ընթացքում կքննարկենք Վայոց ձորից հայտնաբերված վերը նշված և այլ միջնադարյան արաբատառ արձանագրություններ:

ԱՇԽԵՆ ԵՆՈՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀԱՅ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԳԼԽԱՆՈՑԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՊՌՈՇՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ

Օրբելյան և Պռոշյան իշխանները 13-15-րդ դդ. պատմական Սյունյաց աշխարհի Վայոց ձոր գավառի կառավարիչներն էին, որոնք լինելով հմուտ քաղաքական գործիչներ՝ իրենց իշխանավարման շուրջ երեքդարյա ընթացքը նշանավորեցին նաև մշակութաստեղծ և եկեղեցաշեն գործունեությամբ: Ահա այս ժամանակաշրջանով են թվագրվում Վայոց ձոր գավառի նշանավոր եկեղեցիներն ու վանքերը (Նորավանքը, Արատեսը, Սպիտակավոր Ս. Աստվածածինը, Թանահատը, Եղեգիսում Օրբելյանների իշխանական պալատի բարավորը և այլն), ինչպես նաև հայ միջնադարյան հայտնի ուսումնագիտական կենտրոնից՝ Գլաձորի համալսարանից մեզ հասած ձեռագրարվեստի լավագույն նմուշները (մասնավորապես՝ Մոմիկի, Թորոս Տարոնացու, Թորոս Սարկավագի ձեռագրական ժառանգությունը) և այլն:

Վերոնշյալ հուշարձաններից և ձեռագրերից մեզ հասած իշխանական պատկերները թույլ են տալիս նախևառաջ պատկերացում կազմել Օրբելյան և Պռոշյան իշխանների հանդերձանքի և, ի մասնավորի, նրանց գլխանոցի հարդարանքի վերաբերյալ, որոնց տարաբնույթ լուծումները հուշում են տվյալ պատմաշրջանի անցքերի, նորաձևության, իշխանական կերպարի առանձնահատկությունների մասին: Ինչպես հայտնի է, Օրբելյան և Պռոշյան իշխանների կառավարման ժամանակաշրջանը համընկնում է մոնղոլական արշավանքների հետ, ինչով պայմանավորված՝ իշխանական գլխանոցի հարդարատարրերը բաժանել ենք երկու խմբի՝ նախամոնղոլական և մոնղոլական: Առաջին խմբի իշխանական գլխանոցների հետ է աղերսվում Բուրթել Օրբելյանի գլխանոցի հարդարանքը՝ վկայված Բուղտա Օրբելյանի հիշատակին կանգնեցված խաչքարին (1318 թ.): Այն առանձնանում է առջևի բարձրադիր հատվածով, որպիսին տեսնում ենք Հառիճավանքում՝

Իվանե և Զաքարե իշխանների դեպքում և Դադիվանքում՝ Հասան և Գրիգոր իշխանների օրինակով:

Իշխանական գլխանոցների մյուս խումբը վերագրվում է մոնղոլական ժամանակաշրջանին, որն էլ իր հերթին բաժանել ենք վեց ենթախմբի.

1. Փետրավոր գլխարկներ
2. Գլանաձև երիզով սրածայր գլխարկներ
3. Լայնեզր ամբողջական շրջանակով գլխարկներ
4. Լայնեզր երկմաս շրջանակով գլխարկներ
5. Գնդիկավոր և այլ հավելումներով գլխարկներ
6. Իշխանական թագեր

Օրբելյան և Պռոշյան իշխանների կառավարման ժամանակաշրջանից մեզ հայտնի գլխանոցների հարդարատարրերի ուսումնասիրությունը պարզում է, որ դրանք իրենց կառուցվածքով առավելապես աղերսվում են մոնղոլական գլխարկների հետ, սակայն նկատելի են նաև որոշ մանրամասներ, որոնք մոտ են նախամոնղոլական ժամանակաշրջանի հայ իշխանական գլխանոցների հորինվածքներին: Ենթադրելի է, որ մոնղոլական տիրապետության շրջանի հայ բարձրաշխարհիկ անձանց գլխանոցի տարբերակներում և, առհասարակ, հանդերձանքում, նորամուծություններին զուգահեռ պահպանվեցին նաև մի շարք մանրամասներ, որոնք առավելապես բնորոշ էին նախամոնղոլական ժամանակաշրջանին:

ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական
պայքարի պատմության թանգարան

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ

Զեկուցումը նվիրված է եկեղեցական հանդերձանքի բնութագրին՝ Ստեփանոս Օրբելյանի պատմության նյութերի համադրման և վերլուծության հիման վրա: Եկեղեցու ինը դասերը ներկայացնելիս Ստեփանոս Օրբելյանը նշել է դրանցից յուրաքանչյուրի հագուստի և գործառույթների մասին: Առաջին դասը հայրապետներն են՝ զգեստավորված բոլորակ նափորտ/շուրջառով ու հնգակի եմիփորոնով: Երկրորդ դասի՝ արքեպիսկոպոսների հագուստը մինչև կրունկները հասնող բազմախաչ փիլոնն է, վրայից քառակի եմիփորոնը: Երրորդ դասը մետրոպոլիտներն են, որոնց հագուստը նափորտն է՝ վրան թուխ կտավե խաչեր ու եռակի եմիփորոնը: Չորրորդ դասը եպիսկոպոսներն են, որոնց հանդերձանքը կազմված է անխաչ նափորտից և երկակի եմիփորոնից: Հինգերորդ դասը կազմող երեցների՝ քահանաների տարազը շուրջառն է, երկու ուսերին՝ ուրարը, այսինքն՝ փակեղը: Նրանք բեմի վրա իրավունք ունեն լինել բաճկոնով:

Վեցերորդ դասն են սարկավագները, սպասավորները, ովքեր հագել են շապիկ, իսկ ձախ ուսին կրել են փակեղ: Սպասավորել են գլխաբաց Սուրբ բեմին, սեղանին ու քահանաներին: Կանանցից եղել են սարկավագուհիներ, որպեսզի քարոզեն կանանց վանքերում: Նրանք հագել են միանձնուհիների զգեստներ, փիլոն գցել, ճակատին՝ խաչ ունեցել և փոքրիկ ուրարը աջ կողմից բազկից ներքև շորից կամ գոտուց կախ պահած՝ Ավետարան են կարդացել ոչ թե ամբիոնում, բեմի վրա, այլ՝ առանձին կամ մի անկյունում: Սուրբ պատարագին սպասավորությամբ չեն մասնակցել՝ ինչպես տղամարդ սարկավագներն են արել: Յոթերորդ դասը դպիրներն են, որոնք հագել են սարկավագների զգեստ, բայց ուրարը կրել

են ձախ բազկին, արմունկի վրա և սպասավորել առանց գոտու: Ութերորդ դասն անագանոսներն են՝ գրակարդացները: Հագել են նույն զգեստն ու աղաբողոնը, բայց առանց ուրարի: Եկեղեցուց դուրս հագել են կտավե անպաճուճ վերնազգեստ: Իններորդ դասը փսաղտները՝ սաղմոսերգուներն են, որոնց զգեստն ու հագնելաձևն էլ նույնն են:

Դիտարկելով հայ առաքելական եկեղեցու հոգևորականների հանդերձանքի դասային և սարկավագ/սարկվագուհիների հագուստների սեռային առանձնահատկությունները, համադրելով թանգարանային համապատասխան հավաքածունեում առկա առարկաների հետ՝ պարզ է դառնում, որ եկեղեցական հանդերձանքի որոշ տարրեր՝ շապիկ, թիկնաշոր, գլխի հարդարանք, գունային և զարդանախշային առումով որոշակի զուգահեռներ ունեն աշխարհիկ տարազի տարրերի և մանրամասների հետ: Հայ եկեղեցու սպասավորի հանդերձանքն իր համալիրով և ձևավորմամբ, որպես ծիսական ոլորտի բաղադրիչ, Արարչին ձգտելու և նրա հետ կապվելու արտահայտություն է, որն ունի խորհրդաբանական կառուցվածք և ձևավորում:

ԿԱՐԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի
պատմության ազգային թանգարան

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԻ ՀՈՒՇԱՐԺԱՅՆԱՑՈՒՄԸ. ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ

Հուշարձայնացումը որևէ պատմական փաստի (իրադարձության), կամ պատմական անձի հիշողության պահպանմանը, ամրապնդմանն ու հաջորդ սերունդներին փոխանցմանն ուղղված նպատակային գործողությունների ընթացք է: Առանձին դեպքերում, երբ պատմական այս կամ այն իրադարձությունը կարևորագույն, շրջափուլային դերակատարում է ունեցել որևէ կոնկրետ ժողովրդի պատմության կերտման գործընթացում, պատմական այդ երևույթի հավերժացման նպատակով, հուշարձայնացման հետ միաժամանակ ի հայտ է գալիս նաև պատմական փաստի թանգարանացման անհրաժեշտությունը:

Որևէ պատմական փաստի և/կամ իրադարձության հուշարձայնացմանը որպես կանոն նախորդում են մի քանի հանգամանքներ, որոնցից թերևս ամենահիմնականներն են.

- տվյալ ժողովրդի պատմության հոլովույթում պատմական կոնկրետ փաստի և/կամ իրադարձության մեծ դերակատարում ունենալու հանգամանքի գիտակցումը,
- հուշարձայնացման ձևի ընտրությունը,
- հուշարձան-հասարակություն կապի ստեղծումը:

Պատմական իրադարձության և/կամ փաստի հուշարձայնացման որպես ինքնատիպ օրինակ սույն զեկույցում դիտարկվել են հայ միջնադարյան խոշորագույն ուսումնական կենտրոններից մեկի՝ Գլաձորի համալսարանի հուշարձայնացման հետ կապված հարցերը: Քննարկվել են համալսարանի վեց տասնամյակների գործունեության արդյունքների ազդեցության դրսևորումները հետագա հարյուրամյակների վրա: Հանգամանալից վերլուծվել են համալսարանի տեղադրության հետ կապված խնդիրներն

ու ներկայիս «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանի կապը: Ներկայացվել են նաև այն հետաքրքրություններն ու ընկալումները, որոնք ունեն հայ հասարակության ամենատարբեր խմբերն ու օտարերկրյա զբոսաշրջիկները մեր օրերում:

Թեման արդիական և նորութային է, քանի որ այս տեսանկյունից Գլաձորի համալսարանը դեռևս ուսումնասիրված չէ: Նույնիսկ մեր օրերում, հայ հասարակության ստվար խմբեր շարունակում են անտեղյակ լինել միջնադարյան Հայաստանի ամենակարևոր ուսումնական կենտրոններից մեկի մասին, իսկ պատմական իրադարձության վիզուալացումը, մեր ժամանակներում դաստիարակվող սերնդին հաղորդակից դարձնելն առավել քան արդիական և հրատապ է:

Հայ ինքնության մեջ կրթության և դաստիարակության նկատմամբ հնագույն ժամանակներից ձևավորված առանձնահատուկ վերաբերմունքի, այդ վերաբերմունքի շնորհիվ հարյուրամյակներ շարունակ արձանագրված արդյունքների, գոյություն ունեցող պատմական հիշողության, գիտակցման և ընկալման առարկայական ներկայացումն ու հանրահռչակումը կարող է նաև որոշակիորեն լրացնել մշակութաբանության և թանգարանագիտության ասպարեզներում առկա մի շարք բացեր:

ԱՐԳԱՄ ԵՐԱՆՈՍՅԱՆ, ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՕՐԲԵԼՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԳՐՈՍԻ ԱՆՏԻՊ ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ

Տարագրոսը (Ստեփանի Տեր-Վարդանյան) 20-րդ դ. առաջին կեսի հայ ճարտարապետության, հուշարձանագիտության և կերպարվեստի ակնառու գործիչներից է, որի բացառիկ աշխատանքներն աչքի են ընկնում ոչ միայն գիտական մանրակրկիտ վերլուծությամբ, այլ նաև գեղարվեստական բարձրարժեք մոտեցմամբ: Նրա թողած ժառանգության կարևորագույն բաղադրիչներից են միջնադարյան հայկական ճարտարապետական հուշարձանների չափագրությունները, որոնք ներառում են ինչպես ճշգրիտ դաշտային չափագրություններ, այնպես էլ վերակազմության գեղարվեստական մոտեցում՝ արտահայտելով գիտնական-նկարչի վարպետությունն ու խորաթափանց հայացքը:

Տարագրոսի թողած անտիպ չափագրություններում առանձնահատուկ ուշադրության են արժանանում Օրբելյան իշխանության ժամանակաշրջանի աշխարհիկ և եկեղեցական մոնումենտալ ճարտարապետության շքեղ նմուշները, որոնք ոչ միայն արտացոլում են այդ դարաշրջանի ճարտարապետական գեղագիտությունն ու տեխնիկական կատարելությունը, այլև կարևոր վկայություններ են միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության զարգացման և մշակութային վերելքի մասին: «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Չափագրություններ» և «Հանույթներ» ֆոնդում պահպանվում են թվով 22 հուշարձանի բնօրինակ չափագրություններ, որոնցից 6-ը՝ Սյունիքի, 16-ը՝ Վայոց ձորի մարզի տարածքում: 1934-1935 թթ. ընթացքում կատարված այս չափագրությունները բացառիկ արժեք են ներկայացնում՝ ոչ միայն չափագրական բծախնդրության, այլև գիտական վերակազմության

տեսանկյունից՝ լույս սփռելով այդ շրջանի ճարտարապետական մտածողության և ոճական առանձնահատկությունների վրա:

Առանձնապես ուշագրավ են Հորս գյուղի Չեսար Օրբելյանի պալատի չափագրությունը, տանիքի և սյուների վերակազմությունները, Վարդենյաց լեռնանցքում Չեսարի Օրբելյանի կառուցած քարավանատան չափագրությունները, ինչպես նաև Սյունյաց մետրոպոլիտ Տարսայիճ Օրբելյանի կողմից կառուցված Եղեգիսի Զորաց եկեղեցու չափագրությունն ու առանձին հատվածների վերակազմությունը:

1930-ական թթ. Տարագրոսի կողմից արված այս չափագրություններն ու հուշարձանների վերակազմությունները շարունակում են պահպանել իրենց գիտական հիմնավորվածությունը և մեծամասամբ հաստատվում են հետագա տարիներին իրականացված հնագիտական հետազոտություններով: Սրանք ոչ միայն արժեքավոր գիտական նյութ են Օրբելյան իշխանության ճարտարապետական ժառանգության ուսումնասիրության համար, այլև բարձր գեղարվեստականությամբ մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված յուրատեսակ մոտեցում՝ հավերժացնելով այդ շրջանի անզուգական ճարտարապետական ժառանգությունը:

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

ՆՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՀԱՐԿ, ԳՄԲԵԹԱՎՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ ԵՎ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ ՆՈՐԱՎԱՆՔԸ

Այս հետազոտությունը փորձ է՝ նորովի մեկնաբանելու 12-14-րդ դդ. հայկական ճարտարապետության առավել ինքնատիպ նմուշներից՝ երկհարկ գմբեթավոր շինությունների (Եղվարդի, Նորավանքի, Մոշաղբյուրի, Կապուտանի...), կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները, դրանց տեղն ու դերը զարգացած միջնադարի քրիստոնեական արվեստում: Այն ամփոփում է վերջին շրջանի մեր ուսումնասիրությունները, որոնց արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

Առանցքայինն այն է, որ երկհարկ, գմբեթավոր կառույցները եղել են ինքնուրույն ծավատալատարածական հորինվածքներ, որոնք իսկապես ժառանգորդական կապ են ունեցել վաղ միջնադարյան վկայարան մատուռների հետ: Սակայն, միևնույն ժամանակ, դրանք ունեցել են խորքային տարբերություններ, որոնք փաստորեն պայմանավորված են եղել այդ կառույցների ստեղծման դրդապատճառներով: Ի տարբերություն վկայարան-մատուռների՝ խնդրո առարկա կառույցներից և որևէ մեկում առաջնային թաղումներ չեն կատարվել, այդ կառույցները չեն հիմնադրվել սրբերի նահատակության վայրերում, ինչպես սահմանում էր ձևավորված ավանդույթը: Ներկայացված օրինակներից մի քանիսը ստեղծվել են որպես անկախ միավորներ, իսկ մյուսները՝ որպես օժանդակ փոքր կցակառույցներ, որոնք տեղակայվել են նաև ժամատների վերնահարկերում: Դատելով վիմագրերից և մատենագրական աղբյուրներից՝ այդ շինություններից մի քանիսն առնչվել են սրբերի կամ նրանց մասունքների պաշտամունքին: Ուշագրավ է այն, որ վերը թվարկված գրեթե բոլոր կառույցները, չնայած ընդգծված փոքր չափերին, ինչպես նաև բեմերի բացակայությանը, ունեցել

են սեղաններ, և դրանցից շատերի գմբեթները փոխարինվել են ռոտոնդաներով:

Ահա այս և մնացյալ հանգամանքներն ի մի բերելով՝ կարելի է ենթադրել, որ վերոնշյալ կառույցներն իրենց բուն նշանակությամբ չեն ծառայել ոչ որպես դամբարաններ, ոչ էլ եկեղեցիներ, այլ եղել են խորհրդանշական կառույցներ և ունեցել են սահմանափակ ծիսական գործառույթներ, որտեղ մատուցվել են միայն հոգեհանգստյան պատարագներ:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան
հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

«ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ» (ԵՐԵՎԱՆ, 2025) ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Գիրքը լույս է տեսել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ, «Մուղնի» հրատարակչության միջոցով, խմբագիր՝ Արսեն Հարությունյան (էջ 224):

Հրատարակությունը նվիրված է 1282-1338 թթ. Վայոց ձորի Աղբերց վանքում գործած Գլաձորի համալսարանի պատմության և մշակութային ժառանգության այն հարցերին, որոնք նախկինում բավականաչափ ուսումնասիրված չեն եղել: Աշխատության մեջ առաջին անգամ ի մի են բերվում Գլաձորի մասին ցայժմ հայտնի պատմատեղագրական բոլոր տվյալները՝ ըստ համալսարանի գործունեության շրջանի սկզբնաղբյուրների: Այն թույլ է տալիս տեսնել, թե ո՞ր թվականներին և ի՞նչ անուններով է հիշատակվում վանքը՝ Աղբերց վանք կամ Գլաձոր (կամ երկուսը միասին), որո՞նք են այստեղ հիշատակվող եկեղեցիները, ինչպիսի՞ լրացուցիչ բնութագրումներ են տրվում վանքին ու կրթարանին և այլն: Այս տվյալների համադրումն ու վերլուծությունն ամփոփվում են եզրահանգումների 18 կետերում, որոնք կարող են օգտակար լինել Գլաձորի ստույգ տեղը պարզելու ուղղությամբ առաջիկայում կատարվելիք աշխատանքներում:

Գրքում ներկայացվում են Գլաձորի առնչությունները Վայոց ձորի երեք նշանավոր վանական և ուսումնական կենտրոնների՝ Վերին Նորավանքի, Հերմոնի վանքի և եպիսկոպոսանիստ Նորավանքի հետ: Առաջին երկուսի դպրոցները համարվել են Գլաձորից ծագած ուսումնական կենտրոններ, սակայն փաստերը ցույց են տալիս, որ Օրբելյանների հովանավորությամբ գործող Վերին Նորավանքի դպրոցը՝ Դավիթ ռաբունապետի գլխավորությամբ, ձևավորվել է դեռ 1290-ական թվականներին՝ հետագայում գործունեություն ծավալելով Գլաձորի համալսարանի հետ սերտ հա-

մագործակցությամբ: Նույնպիսի անմիջական կապեր են եղել Հերմոնի վանքի հետ՝ մինչև համալսարանի այնտեղ տեղափոխվելը (1338 թ.): Իսկ եպիսկոպոսանիստ Նորավանքում գահակալած առաջին երեք մետրոպոլիտները՝ Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Օրբելը, Ստեփանոս Տարսայիճը, ինչպես նաև այստեղ բնակված՝ Օրբելյանների տան ճարտարապետ Մոմիկը, եղել են Գլաձորի համալսարանի շրջանավարտներ:

Գրքում քննվում են Գլաձորի պատմության որոշ դրվագներ: Բաժիններից մեկը վերաբերում է Գլաձորի՝ այսպես կոչված «առօրեականության պատմությանը», որն այստեղ ապրած, աշխատած, ուսանած մարդկանց կյանքի, կենցաղի, հարաբերությունների մասին որոշ նյութերի ամփոփումն է: Առանձին ենթավերնագրով ներկայացվում է Գլաձորում Թորոս Սարկավագի ձեռքով ստեղծված մի ուշագրավ խմբանկար՝ 44 անձանց պատկերով, որի վերին մասում Եսայի Նչեցին է, նրանից ներքև՝ երկու շարքով՝ համալսարանի ուսուցիչներն ու սաները, իսկ մանրանկարի կենտրոնում՝ գրակալին դրված գիրք ընթերցող մի ուսանող, որը հավանաբար ներկայացնում է իր ատենախոսությունը:

Աշխատությունն ավարտվում է Գլաձորի ուսուցիչների և սաների անվանացանկով՝ յուրաքանչյուրի մասին համառոտ տեղեկություններով, որն ընդգրկում է 73 անուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վայոց ձորի պատմամշակութային հուշարձանների պահպանության, ուսումնասիրման և հանրահռչակման գործընթացները
Աշոտ Փիլիպոսյան. 5

2. Չեսար Օրբելյանը և «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 2024 թ. պեղումները Հորս գյուղում
Ավետիս Գրիգորյան, Լևոն Վասիլյան, Հայկ Դանիելյան, Արման Եղիազարյան, Տիգրան Զաքյան, Աննա Բաղդասարյան, Աստղիկ Սիմոնյան, Սուսաննա Բաբայան, Աստղիկ Արզումանյան, Հասմիկ Սիմոնյան. 7

3. Գնիշիկ գետի կիրճի՝ Օրբելյանների ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական սկզբնաղբյուրները
Բորիս Գասպարյան, Արթուր Պետրոսյան, Վարդուհի Մելիքյան, Հայկ Հայդոսյան, Անի Ադիգյոզալյան, Դմիտրի Առաքելյան, Սամվել Նահապետյան, Սմբատ Դավթյան. 9

4. Օրբելյանների եկեղեցաշինական գործունեությունը Այրարատ նահանգում ըստ Սպիտակ վանքի պեղումների արդյունքների
Դիաննա Միրիջանյան. 11

5. Հերմոնի վանքից Տափի բերդ. Օրբելյանների ժառանգության հետքերով
Մերի Սաֆարյան. 13

6. Օրբելյանների իշխանների նստավայր Եղեգիս գյուղաքաղաքը
Հուսիկ Մելքոնյան. 15

7. Վայոց ձոր գավառի ռազմավարական համակարգերը
Արա Զարյան. 16

8. Օրբելյանների և Պռոշյանների իշխանական ապարանքները Վայոց ձորում
Արտակ Ղուլյան. 18

9. Անապատական շարժումը և Վայոց ձորի նորահայտ քարայրճգնարանները
Սմբատ Դավթյան. 19

10. Օրբելյանների ազդեցության վերականգնումը Վրաստանում և Ջալալյան ճյուղի վանական շինարարությունը
Հայկ Հակոբյան. 21

11. Մոմիկի խաչքարարվեստի ոճական ակունքների հարցը
Սևակ Արևշատյան. 22

12. Արաբատառ արձանագրություններն Օրբելյանների «ինջու» Վայոց ձորում
Տիգրան Միքայելյան. 23

13. Հայ իշխանական գլխանոցների հարդարանքը Վայոց ձորում Օրբելյանների և Պռոշյանների օրոք
Աշխեն Ենոքյան. 24

14. Հոգևորականների հանդերձանքը Սյունյաց մետրոպոլիտությունում ըստ Ստեփանոս Օրբելյանի նկարագրության
Սվետլանա Պողոսյան. 26

15. Պատմական փաստի հուշարձայնացումը. Գլաձորի համալսարան պատմամշակութային արգելոց-թանգարան
Կարեն Փահլևանյան. 28

16. Օրբելյան իշխանության պատմաճարտարապետական ժառանգությունը Տարագրոսի անտիպ չափագրություններում
Արգամ Երանոսյան, Արման Եղիազարյան. **30**

17. Նոր դիտարկումներ միջնադարյան Հայաստանի երկհարկ, գմբեթավոր կառույցների ճարտարապետական առանձնահատկությունների շուրջ և Օրբելյանների հոգևոր կենտրոն Նորավանքը
Տիգրան Գրիգորյան. **32**

18. «Գլաձորի համալսարանի պատմությունից» (Երևան, 2025), գրքի ներկայացում
Կարեն Մաթևոսյան. **34**



ISBN 978-9939-867-63-2

9 789939 867632